Հաստատում եմ՝

Տնօրեն / Հ. Պետրոսյան/

«30» օգոստոս 2023թ.

Տարեկան պլան
2023-2024 ուստարի
ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի
Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
տնօրենի մասնագիտացված կրթության աջակցությունների գծով տեղակալի
դաստիարակչական աշխատանքների

ՀՀ Կոտայքի մարզ
ք. Նոր Հաճն
2023թ.

Ներածություն

2023-2024 ուստարվա ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ տնօրենի մասնագիտացված կրթության աջակցությունների գծով տեղական դաստիարակչական աշխատանքների պլանը կազմվել է՝ հիմք ընդունելով

ա)ՀՀ հանրակրթության մասին օրենքը

բ) ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N4 հիմնական դպրոցի» ՊՈԱԿ-ի կանոնադրության.

- Գլուխ IV.Դպրոցի կառավարումը՝ կետ 73,74,
- Գլուխ V.Խորհրդակցական մարմիններ՝ կետ 75,79 /ենթակետեր 1, 2, 3, 4, 7/, կետ 80 / ենթակետեր 7,10/, կետ 93 /ենթակետեր 2,6,11/, կետ 94, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109,
- Գլուխ VI.Դպրոցի կրթական գործընթացի մասնակիցները

գ)ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման տնօրենի մասնագիտացված կրթության աջակցությունների գծով տեղական պաշտոնի անձնագիրը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը
2.Պարտադիր կրթության կենսագործում
3.Աշխատանք ծնողների հետ
4.Աշխատանք սովորողների հետ
5.Ներդպրոցական վերահսկողության համակարգ
6.Կազմակերպական-մանկավարժական աշխատանք
7.Աշխատանք պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ
8.Ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական,հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներ
9.Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում
10.Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում
11.Համագործակցություն

Դաստիարակչական աշխատանքների նպատակը՝

Սովարաղների անհատական զարգացման համար հանդուրժողականության, շարունակականության, ճկունության և դաստիարակչական համակարգի թափանցիկության վրա հիմնված պայմանների բարելավում

Խնդիրները՝

1. Շարունակել սովորողների մոտ հարդուրժողականության ձևավորումը միմյանց միջև համագործակցային միջավայրի բարելավման միջոցով:
2. «Գիտության մեջ իմ առաջին քայլերը» ծրագրի շրջանակներում կատարելագործել շնորհալի դպրոցականների հետ աշխատանքի համակարգը, որն ապահովում է նրանց անձնական և սոցիալական ինքնիրացումը:
3. Մեթոդական աշխատանքի և ինքնակրթության համակարգի միջոցով ակտիվացնել մանկավարժական կազմի նորարարական մակարդակի բարելավման աշխատանքները:
4. Աշխատանք տանել «Դպրոցը առողջության տարածք է» մոդելի ներդրման ուղղությամբ, որն ապահովում է կրթական գործընթացի մասնակիցների առողջության պահպանումն ու ամրապնդումը սոցիալական կազմակերպություններին ինտեգրվելու միջոցով:
5. Ամրապնդել ընտանիքի, համայնքի և հասարակության հետ սովորողների շփման հմտությունները, աշխատանք տանել ծնողական համայնքի հետ ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ:
6. Գրքի և ընթերցանության միջոցով ձևավորել հիմնական դպրոցի շրջանավարտին բնորոշ աշխարհայացք:
7. Արտակարգ իրավիճակներում /համաճարակ, պատերազմ/ դրսևորվելու հմտությունների բարելավում:
8. Ուսումնակադաստիարակչական աշխատանքների միջոցով ձևավորել հիմնական դպրոցի շրջանավարտին բնորոշ կարողունակությունները:

Դաստիարչական աշխատանքների պլանավորումը դպրոցում

Գործունեության աշխատանքային խմբերը հետևյալն են՝

1.Մանկավարժական աշխատողներ՝
ա) դասղեկներ
բ) ուսուցիչներ
գ) սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչդ) աջակցության խումբ /հոգեբան, սոցմանկավարժ, ուսուցչի օգնական և այլն/
դ) մ/մ նախագահներ

1. Սովորողներ
ա) աշակերտական խորհուրդ
բ) սոցիալապես անապահով սովորողներ
գ) անցանկալի վարք ունեցող սովորողներ

2. Ծնողներ
ա) ծնողական խորհուրդ
բ) ծնողական համայնք

4.Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ
ա) տնօրեն
բ) տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
գ) գրադարանավար
ե) տնտեսվար

5.Պետական և հասարակական կառույցներ
ա) ՀՀ Կոտայքի մարզպետարան
բ)ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճնի համայնքապետարան
գ) մշակութային կենտրոններ
դ) ոստիկանություն /ոստիկանության անչափահասների գործերով աշխատակից/
ե) հասարակական և միջազգային կազմակերպություններ /արտոնագրված/
զ)ՀՀ և արտերկրի ուսումնական հաստատություններ /մասնագիտական կողմնորոշում/

6.Արտադասարանական խմբակների և երկաօրյաների կազմակերպում
ա)Կազմակերպել և ղեկավարել արտադասարանական խմբակների և երկաօրյաների գործունեությունը:
բ)Կազմակերպել խմբակների աշխատանքների կիսամյակային կամ տարեկան հաշվետվություններ, միջոցառումներ, գրական երեկո, ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ և այլն:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ձևավորել հիմնական կրթության շրջանավարտի ակնկալվող հետևյալ կարողունակությունները

1.Լոզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետեն հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվեն մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների:

Վերջնարդյունք.

ա) սովորողները կարողանան կիրառել լեզուն որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք,

բ) բանավոր և գրավոր ձևերով ճանաչեն, ըմբռնեն, արտահայտեն, ստեղծեն և մեկնաբանեն տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաների և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

2.Սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում:

Վերջնարդյունք.

ա) սովորողները կարողանան ինքնակազմակերպվել և արդյունավետ կառավարել ժամանակը,

բ) սովորողները կարողանան գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորեն աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում,

գ) սովորողները կարողանան իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրել, վերլուծել, ինչպես նաև ստեղծագործական մոտեցումներ կիրառել:

3.Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողները սովորում են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման:

Վերջնարդյունք.

ա) սովորողները վստահ լինեն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարեն սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանան դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինճպես նաև մասնագիտական կողմնորոշում,

բ) սովորողները կարողանան դեսևորել հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից,

գ) սովորողները սոցիալական հարաբերություններում կարողանան գործել կառուցողական և համերաշխ, դրսևորեն ընկերակցելու ունակություն, կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտությունները,

դ) կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում կարողանան ճանաչել տարբեր մշակույթների և կրոնների տարբերությունները:

4.Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն. սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը:

Վերջնարդյունք.

ա) սովորողները գիտակցեն ՀՀ Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում,

բ) սովորողները արժևորեն մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորեն սեփական քաղացիական պարտքը, քաղացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժաղավրդավարության կենսունակության հիմք,

գ) սովորողները ճանաչեն հասարակության կյանքիմշակութային, պետահիրավական և տնտեսական

ոլորտներն ու համակողմանի վերլուծեն դրանք,
դ) սովորողները ցուցաբերեն նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

5.Թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին և հմտություններին, պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում:
Վերջնարդյունք.
ա) սովորողները կարողանան կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք,
բ) սովորողները կարողանան գնահատել մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա,
գ) թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցեն նաև դրանց հետ կապված ռիսկերը, կարողանան գնահատել և վերափոխել իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից:

6. Մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթնա ու մարդկային քաղաքարթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ:
Վերջնարդյունք.
ա) սովորողները կարողանան արժևորել սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունենան ՀՀ աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն,
բ) սովորողները կարողանան ձևավորել սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում,
գ) սովորողները ունենան սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը:

7.Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն. սովորողները առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու համար:
Վերջնարդյունք.
ա) սովորողները կարողանան ընկալել բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջ եղած փոխադարձ կապը,
բ) սովորողները կարողանան ընկալել տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջների համատեքստում, ճանաչեն մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը:

8.Տնտեսական կարողունակություն. սովորողները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը:
Վերջնարդյունք.
ա) սովորողները կարողանան ընկալել տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչեն բնության և հասարակության փոխազդեցությունը,
բ) սովորողները կարողանան ընկալել կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Դասղեկական աշխատանք Օգնել դասղեկներին կազմել դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը հետևյալ կետերի համաձայն. **ա)** Դասղեկներին ներկայացնել դասղեկի աշխատանքային պլանում ներկայացված պահանջները, **բ)** Յուրաքանչյուր դասղեկի հետ քննարկել դասարանի տարիքային առանձնահատկություն-ները, **գ)** Վերհանել դասարանի ուժեղ և թույլ կողմերը, **դ)** Կազմել կարիքի ենթակա սովորողների ցանկը, **ե)** Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. -Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: -Սովորողներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: -Դաստիարակության հիմքում դնել հիմնական հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:	Սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, դասվարներ	Դասղեկների հետ համատեղ դպրոցի դաստիարակ–չական աշխատանքներ արդյունավետ կազմակերպում, հիմնական դպրոցի շրջանավարտի մոտ համապատաս–խան կարողունակու–թյունների ձևավորում, դպրոց–ուսուցիչ–ծնող կապի ամրապնդում: Դպրոցի հեղինակու–թյան բարձրացումը համայնքում	
	գ) Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել սովորողների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, դասվարներ		
	է) Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս բացառել և նվազեցնել անհարգելի բացակայությունները:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,դասղեկներ, դասվարներ,ծնողներ		

	ը) Ուստարվա ընթացքում հրավիրել առնվազն 4 դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ դասվարներ		
	թ) Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3-5 հոգուց), ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնդաստիարակչական գործընթացի կազմակերպմանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ դասվարներ		
	ժ) Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուս.աշխ.գծ.տեղակալ, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ դասղեկներ, դասվարներ		
	ի)Կատարել դասղեկի ժամերի դասալսումներ, նպատակային այցելություններ, դիտարկումներ: Դասղեկի ժամերի կատարողականի վերահսկում:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,		
2.	**Գեղագիտական դաստիարակություն**			Սովորողի բազմակողմանի դաստիարակու–թյան իրականացում, աշխարհայացքի, հմտությունների և կարողունակու–թյունների ձևավորում, հայեցի դաստիարակու–թյան իրականացում Սովորողների ստեղծագործա–կան մտքի զարգացում, ձեռքբերված կարողունակու–	
	ա) Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ դասղեկներ,		
	բ) Դասղեկի մասնակցությամբ և սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ		
	գ) Սովորողներին մասնակից դարձնել արտադպրոցական և արտադասարանական, մարզային և համապետական միջոցառումների, մրցույթների	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, ծնողներ, հասարակական և		

	և գիտաժողովների: Կազմակերպել ճանաչողական,ուսուցողական էքսկուրսիաներ, կինոդիտումներ, այց թանգարաններ, թատրոններ՝ ներկայացումների կոլեկտիվ դիտում:		միջազգային կազմակերպու–թյուններ	թյունների դրսևորում	
3.	**Ֆիզիկական դաստիարակություն** **ա)**Բարձր մակարդակով կազմակերպել և անցկացնել միջդասարանական սպորտային միջոցառումներ, նախապես իրազեկելով դասղեկներին և սովորողներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, դասղեկներ,սպորտ դպրոցի մարզիչներ	Առողջ ապրելակերպի կանոնների ամրապնդում	
	բ)Կազմակերպել «Առողջության օր»՝ սովորողների այցելությունը Նոր Հաճնի պոլիկլինիկա:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, բուժքույր, ԴԱԿ, դասղեկներ		
4.	**Ռազմահայրենասիրական աշխատանք** **ա)**Կազմակերպել միջոցառումներ, պատրաստել պատի թերթեր նվիրված հայ ազգի հերոսներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, զինղեկ,դասղեկներ	Հայրենիքի նկատմամբ սիրո դաստիարակում	
	բ)Այցելություն Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար և Ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված մարտիկների հուշարձաններին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, զինղեկ, ԴԱԿ, ԵԿՄ անդամներ		
	գ)Անցկացնել քաղպաշտպանության դասեր:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, զինղեկ, դասղեկներ		
5.	**Աշխատանքային դաստիարակություն** **ա)** Բարձրացնել աշխատանքային ուսուցման, սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,ԴԱԿ, դասղեկներ	Սովորողի մոտ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի ձևավորում	

	որակը: բ) Կազմակերպել և անցակցնել շաբաթօրյակներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, տնտեսվար, դասղեկներ,		
6.	**Գրադարանային աշխատանք** **ա)** Օգնել գրադարանավարին կազմել և հաստատման ներկայացնել տարեկան աշխատանքային պլանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանի վարիչ	Գեղարվեստական գործունեության և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորում	
	բ) Կազմակերպել միջոցառումներ, անցկացնել տեսադասեր նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանի վարիչ,դասղեկներ		
	գ) Նպաստել սովորողների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել օժտված և տաղանդավոր սովորողներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանի վարիչ, դասղեկներ		
	դ)Համապատասխան պայմաններ ստեղծել սովորողների համագործակցային ստեղծագործական, հետազոտական և այլ հմտությունների զարգացման համար ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանի վարիչ, դասղեկներ		
	ե)օժանդակել շնորհանդեսների, գրական քննարկումների, կինոդիտումների, ներկայացումների, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանի վարիչ, դասղեկներ		
	զ)Աջակցել սովորողներին և մանկավարժական աշխատողներին ինքնակրթության արդյունավետ կազմակերպման գործում:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանի վարիչ,դասղեկներ		

2. Պարտադիր կրթության կենսագործում

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունը
1.	Հնարավորության սահմաններում օրենքով նախատեսված կարգով, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով:	սեպտեմբեր	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկ, գրադարանավար	Սոցիալապես անապահով սովորողների բացահայտում, անվճար գրքերի տրամադրում	
2.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ	Անհարգելի բացակայու–թյունների բացահայտում և կանխարգելում	
3.	Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ, ուսուցիչներ	Պարտադիր կրթության իրականացում	
4.	Աշխատանք տանել V-IX դասարանների դժվար դաստիարակվող սովորողների և նրանց ծնողների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, անչափահասների տեսուչ	Բարոյահոգեբա–նական մթնոլորտի ձևավորում	
5.	Աշխատանք տանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ երեխաների հետ :	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ, ուսուցիչներ	Պարտադիր կրթության իրականացում	
6.	Կազմակերպել և իրականացնել ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Կարողունա–կությունների ձևավորում	
7.	Համակարգել մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Մասնագիտա–կան կողմնորոշման իրականացում	
8.	Մասնակցել ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սովորողների աջակցության ծառայությունների	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ, ուսուցիչներ	Պարտադիր կրթության իրականացում	

	տրամադրման և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործընթացի կազմակերպման հարցերում:				
9.	ԱՈՒՊ-ների միջոցով հսկողություն սահմանել ներառական կրթության որակի բարձրացման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ, ուսուցիչներ	Կրթության առանձնահա–տուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ սովորողների կրթության գործընթացի կազմակերպում	

3. Աշխատանք ծնողների հետ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ	Դասարանա–կան ծնողխորհրդի ձևավորում	
2.	Ընտրել 2023-2024 ուստարվա դպրոցի ծնողական խորհրդի կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	Սեպտեմբեր	Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ	Դպրոցի ծնողխորհրդի ձևավորում	
3.	Դպրոցի ծնողական խորհրդի հետ համատեղ աջակցել դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ծնողներ	Կրթության առանձնահա–տուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ սովորողների կրթության գործընթացի կազմակերպում	
4.	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, ծնողներ	Սովորողի բազմակող–մանի դաստիարա–կության իրականացում, աշխարհայաց–քի, հմտու–թյունների և կարողունակու–թյունների ձևավորում, հայեցի	

				դաստիարակու – թյան իրականացում	
5.	Մասնակցել դասրանական ծնողական ժողովներին և ծնողական խորհրդի նիստերին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների և խնդիրների բացահայտում	
6.	Աջակցություն տրամադրել ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Մանկավար–ժահոգեբանա–կան խորհրդատվու–թյան տրամադրում	
7.	Անհատական աշխատանք տանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈ/ երեխա ունեցող ծնողի հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Մանկավար–ժահոգեբանա–կան խորհրդատվու–թյան տրամադրում	
8.	Ծնողական խորհրդի հետ համատեղ մասնակցել ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Նյութական օգնություն ցուցաբերում, սովորողի ինտեգրում դպրոցում կայանալիք միջոցառումնե–րին և էքսկուրսիանե–րին	
9.	Ծնողների համար կազմակերպել բաց դռների օրեր:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Ծնող–ուսուցիչ կապի ստեղծում և ամրապնդում	

4. Աշխատանք սովորողների հետ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Դպրոցում ստեղծել աշակերտական խորհուրդ;	Սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Ինքնավարության կազմակերպում	
2.	Աշակերտական խորհրդի ուժերով ստեղծել հետաքրքրությունների ակումբներ:	Սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, աշակերտական խորհուրդ	Ինքնավարության կազմակերպում	
3.	Ամրապնդել սովորողներ-ուսուցիչ, սովորող-ծնող, սովորող-սովորող հարաբերությունները: Նպաստել դպրոցի ծնողխորհրդի և աշակերտական խորհրդի համագործակցությանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ	Դպրոցի ԾԽ և ԱԽ արդյունավետ համագործակցություն	
4.	Հետևել դպրոցում սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Սովորողների իրազեկում իրավունքների և պարտականությունների մասին	
5.	Հետևողական աշխատանք տանել, որպեսզի աշակերտական խորհրդի աշխատանքները նպաստեն երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորում	
6.	Ամիսը մեկ անգամ հրավիրել աշխորհրդի նիստ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ	Կատարած ածխատանքի վերլուծություն, պատասխանատվության ձևավորում	
7.	Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների մշակման և ամրապնդման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,ԴԱԿ, դասղեկներ	Երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորում	
8.	Հետևողական աշխատանք տանել սովորողների առաջադիմության և գիտակցական կարգապահության պահպանման և բարձրացման	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ	Կարգապահության պահպանում բարձրացում	

	ուղղությամբ:				
9.	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը դպրոցական արձակուրդների և հանգստյան օրերի ընթացքում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,ԴԱԿ, դասղեկներ, ծնողներ	Սովրողի բազմակող-մանի դաստիարա-կության իրականացում, աշխարհայաց-քի, հմտու-թյունների և կարողունակու-թյունների ձևավորում, հայեցի դաստիարակու - թյան իրականացում	
10.	Դասղեկների և ուսուցիչների հետ վեր հանել անցանկալի վարք ցուցաբերող սովորողներին: Ուսումնասիրել անցանկալի վարքի դրսևորումներն ու պատճառները, կատարել կանխարգելիչ աշխատանքներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,ԴԱԿ, դասղեկներ, անչափահասների տեսուչ	Սովորողի մոտ ձևավորել գիտակցական մոտեցում վարքի և կարգապահու-թյան նկատմամբ	
11.	Աշխատանք տանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ երեխաների հետ. ա) Կատարել ԿԱՊԿՈՒ սովորողների հաշվառում: բ)Վկայագրված սովորողների հետ կազմակերպել աշխատանք օրենքի սահմաններում: գ)Համագործակցելով ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների և դասավանդող ուսուցիչների հետ,ապահովելով կրթություն ստանալու իրավունքի իրականացումը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ծնող, դասղեկ	Կրթություն ստանալու իրավունքի իրականացում	
12.	Բացահայտել և հաշվառել սոցիալապես անապահով աշակերտներին՝ ըստ դասարանների: Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով աշակերտներին օգնելու հարցում:	Սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ծնող, դասղեկ	Սոցիալապես անապահով աշակերտներին օգնության ցուբարում	
13.	Աշխատանք տանել սովորողների մոտ արդի դարաշրջանում խիստ անհրաժեշտ գիտելիքների և	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկ, ինֆորմատիկայի ուսուցիչ	Սովորողների բազմակողմա-նի զարգացում	

	հմտությունների զարգացման ուղղությամբ, մասնավորապես՝ ստեղծագործ, քննադատական ու համակարգված մտածողության, մեդիագրագիտության, ինքնուրույն սովորելու և հետազոտական աշխատանքներ կատարելու, համագործակցային աշխատանքի և այլ հմտությունների և կարողունակությունների զարգացման նպատակով:				
14.	Սովորողների մասնագիտական կողմնորոշումն և ֆինանսական կրթությունն ապահովելու նպատակով կազմակերպել և անցկացնել կողմնորոշիչ և տեղեկատվական զրույցներ, հանդիպումներ համապատասխան մասնագետների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկ, ուսուցիչներ	Սովորողների մասնագիտա–կան կողմնո–րոշում	
15.	Աշխատանք տանել հաստատության օժտված սովորողների հետ. ա)Մրցույթների և այլ միջոցառումների կազմակերպում /մրցույթներ, փառատոններ/՝ նպատակ ունենալով հայտնաբերել գործունեության տարբեր ոլորտներում օժտված երեխաներին /առարկայական, ստեղծագործական, գեղագիտական և այլն/ տարածքային, մարզային և հանրապետական, միջազգային մակարդակի մրցույթներում մասնակցության ապահովում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուս.աշխ.գծ. տեղակալ, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկ, ուսուցիչներ	Տարբեր ոլորտներում օժտված երեխաներին /առարկայա–կան, ստեղծա–գործական, գեղագիտա–կան և այլն/ տարածքային, մարզային և հանրապետա–կան, միջազ–գային մակարդակի մրցույթներում մասնակցու–թյան ապահովում:	

5. Ներդպրոցական վերահսկողության համակարգ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Պարբերաբար հետևողական ուսումնասիրություն իրականացնել դպրոցում պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման ուղղությամբ և արդյունքները քննարկել դպրոցում գործող խորհուրդներում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Սովորողների ակտիվ մասնակից դարձնել պարտադիր կրթության օրենքի իրականացման գործում	
2.	Ուումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների նիստերի ժամանակ,կատարել վերլուծություն և եզրահանգումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Դասղեկների աշխատանքի արդյունավետ կազմակերպում	
3.	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Դաստիարակ-ված և կրթված անձի ձևավորում	
4.	Դաստիարակչական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Դաստիարակ-չական աշխա-տանքների արդյունավետ կազմակերպում	

6. Կազմակերպական-մանկավարժական աշխատանք

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	Մշտապես	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Կարգապահու-թյան վերահսկում	
2.	Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուսումնական տարվան:	Օգոստոս	Տնօրինություն, տնտեսվար	Լինել պատրաստ նոր ուսումնական տարվան	
3.	Վերանորոգել աշակերտական դասագրքերը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ դասղեկներ, գրադարանի վարիչ	Սովորողի մոտ պատասխա-նատվության ձևավորում	
4.	Դպրոցի աշակերտական խորհրդի աշխատանքները կազմակերպել և վերահսկել աշակերտական խորհրդի կանոնադրության համաձայն:	Սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,ԴԱԿ, դասղեկներ	Ինքնավարույ-նության ձևավորում	

5.	Դասղեկների հետ համատեղ ուսումնասիրել և կազմել համապատասխան տեղեկանք սոցիալապես անապահով, բազմազավակ ծնողների /3,4, և ավելի/, միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ երեխաների մասին, հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով:	Սեպտեմբեր	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, դասարանի ծնողխորհրդի նախագահ	Դպրոցի սովորողների սոցիաալական վիճակի մասին կազմել պատկերացում	

7. Աշխատանք պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Սովորողների իրազեկման նպատակով, պարբերաբար կազմակերպել հանդիպումներ, կլոր սեղաններ, քննարկումներ ոստիկանության անչափահասների գործերով աշխատակիցների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, անչափահասների տեսուչ	Սովորողների իրազեկում	
2.	Համագործակցել և ակտիվ մասնակցել հասարակական,միջազգային, տարածքային կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումներին, դասընթացներին և այլ աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Համակարգա–յին և ինտեգրված մտածողության ձևավորում	
3.	Համագործակցել գործընկերների՝ ՀՀ այլ դպրոցների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Փորձի փոխանակում	

8. Ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Աշխատանք տանել սովորողների մոտ հաստատությունում վնասակար սովորությունների կանխարգելման ուղղությամբ /ալկոհոլ, ծխախոտ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր /:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ դասղեկներ, բժիշկ, ծնողներ, անչափահասների տեսուչ	Սովորողների մոտ առողջ ապրելակերպի կանոնների ձևավորում	
2.	Կազմակերպել սովորողների խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ, տեղեկատվական զրույցներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դպրոցի ծնողական խորհրդի անդամներ	Ուսուցիչ–ծնող–երեխա կապի ամրապնդում	
3.	Սովորողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառուներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, բժիշկ	Սովորողների մոտ առողջ ապրելակերպի կանոնների ձևավորում	
4.	Աշխատանք տանել բուլինգը, բռնությունն ու խտրականությունը կանխարգելելու ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,	Բուլինգի կանխարգելում	
5.	Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ, զրույց-բանավեճեր, կլոր սեղաններ՝ ուղղված սովորողների բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ, հանդուրժողականության և համագործակցության ձևավորման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, հոգեբան	Համագործակ–ցության և հանդուրժաղա–կանության ձևավորում	
6.	Աշխատանք տանել հաստատությունում	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ,	Բանակցային արվեստի	

	սովորողների, ուսուցիչներ և ծնողների շրջանում կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթության և հանդուրժողականության ուսուցումը իրականացնելու ուղղությամբ:		դասղեկներ, ծնողներ	զարգացում	
7.	Սովորողների մեջ ձևավորել բանակցային գործընթացի արվեստը հաստատությունում բռնությունն ու խտրականությունը կանխարգելելու նպատակով:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, հոգեբան,ծնողներ, անչափահասների տեսուչ	Բանակցային արվեստի զարգացում	
8.	Նպաստել հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը, համագործակցելով ազգային փոքրամասնությունների համայնքային դպրոցների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Ինքնաճանաչո-ղական և սոցիալական, մշակութային կարողունա-կության ձևավորում	

9. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Հաշվի առնելով հիմնական դպրոցի սովորողների տարիքային առանձնահատկությունները, պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն սովորողների ինքնակրթությանը, մասնագիտական կողմնորոշմանը և հոգևոր մտքի զարգացմանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,փոխտնօրենները, առարկայական մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	Սովորել սովորելու կարողունա-կության ձևավորում	
2.	Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ՀՀ հանրակրթության մասին օրենքով սահմանած ընդհանրական պահանջներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուս.աշխ.գծ.տեղակալ, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Բարենպաստ կրթական և բարոյահոգե-բանական մթնոլորտի ձևավորում	

3.	ՏՀՏ ներդրման նպատակով ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ անցկացնել տեղեկատվական զրույցներ, քննարկումներ, գործնական և տեսական աշխատանքներ համակարգչային նորարարական տեխնոլոգիաների, ժամանակակից և մատչելի համակարգչային գործիքների կիրառման ուղղությամբ, որոնք հատուկ նախատեսված են կրթական խնդիրների լուծման, հեռավար դասընթացը արդյունավետ կազմակերպման համար:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուս.աշխ.գծ.տեղակալ, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Փորձի փոխանակում և մասնագիտա–կան գործունեության արդյունավե–տության բարձրացում	

10. Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման, հաշվառման ուղղությամբ /կիսամյակը մեկ անգամ ստուգել դպրոցական գույքի վիճակը/:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, տնտեսվար	Գույքի պահպանում	
2.	Հետևել և ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, տնտեսվար, դասղեկներ	Պատրաստ լինել արտակարգ իրավիճակնե–րին	
3.	Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ /«Տաք սննդի» կազմակերպում/:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, տնտեսվար, դասարանի ծնողխորհուրդ	Ապահովել սովորողների սննդի կազմակեր–պումը պահպանելով առողջ ապրելակերպի կանոնները	

11.Համագործակցություն

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներ	Ակնկալվող վերջնարդյունքը	Ստացված վերջնարդյունքը
1.	Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, առարկայական մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	Սովորողների մտահորիզոնի զարգացում	
2.	Համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուս.աշխ.գծ. տեղակալ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Փորձի փոխանակում և մասնագիտա–կան գործունեության արդյունավե–տության բարձրացում	
3.	Համագործակցել մշակութային կենտրոնների հետ էքսկուրսիաների, միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների կազմակերպման հարցերում:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ	Հայեցի դաստիարակության իրականացում	
4.	Համագործակցել ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի աշխատողների հետ հակահիրավական և հանցագործ վարք ցուցաբերող սովորողների հետ աշխատանքում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	Օրինապահ անձի ձևավորում	

Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Կ. Սիմոնյան